ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2024 թվականի N 445

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄՅՆՔԻՑ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 47-րդ և 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2024 թվականի փետրվարի 12- ի N 01/06/01164-2024 գրությունը որոշում եմ.

1. Հայաստանի պատանիների շախմատի առաջնությանը մասնակցելու համար,ս/թ փետրվարի 24-ից մարտի 03-ը կայանալիք Կոտայքի մարզի պատանիների շախմատի առաջնությանը Նոր Հաճըն համայնքի մասնակիցների տրանսպորտային ծախսերը հոգալու համար համայնքի 2024 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 08.1.1 <Սպորտային միջոցառումների կազմակերպում>> ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4229 < Այլ տրանսպորտային ծախսեր > հոդվածից հատկացնել 54000 դրամ :

2. Հանձնարարել Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս. Բաղալյանին ապահովել ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ս. Բաղալյանի վրա:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ